Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ltn
2203

1999

Փոսկոլեան Ղևոնդ

ՀՈՒԳՈՆԻ ՓՈՍԿՈՒԼԵԱՆ

ՑԱՂԱԳՍ

ԳԵՐԵԶՄԱՆԱՑ

ՏԱՂ

ԹԱՐԳՄԱՆԵԱԼ Ի Հ. Ա. Կ. ԲԱԳՐԱՏՈՒՆԻՈՑՆ

1957

ԼԻՊ
ԳՐԱԴԱՐԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-ում ՍՍՀՄ

Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

1864

Գ-ՀՈՍ

ՈԳԻՈՑ ՎԱԽՃԱՆԵԼՈՑՆ
ԻՐԱՒՈՒՆՔ ՍՈՒՐԲ ԼԻՆԻՑԻՆ

Օրէնք ժբ տախտակացն։

ՀՖ 2207

Գ 2203-60

ԳԻՏԵԼԻՔ

Այս Հուլիոնի Փոսկոլեայ 'ի վերայ Գերեզմանաց Տաղ՝ մի է՞ի չքնաղ և հրաշակերտ սքանչելեաց Իտալական քերթուածեան դարուցս, անցելոյն և այժմուս, անուանի առ ամենայն իտալագէտս, վասն Ճշմարիտ Պինդարական իմաստիցն և ոճոյն, և առ այլս՝ Թարգմանութեամբ։

Այնչափ է գեղեցկութիւն սորա, մինչև հմտից ոմանց զգաստից Իտալացւոց անաչառ խոստովան լինել՝ թէ յառաջ քան զայս և ոչ գրեթէ մի քնարական երգ էր նոցա այդմ անուան արժանի, թէպէտ և սա զիւցազնական չափովք է յօրինեալ, և ոչ բուն քնարականք։

Քաղցր է և մեղ յիշատակել, և խնդամք ընդ Ազգիս, զի և 'ի նմա գտան բանիբուն յերիտասարդ Մուսայասիրաց Վարժարանացս, որոց ծանուցեալ զյարգ և զհամ Տաղիս, ստիպեցին զմեզ

բանիւ և գրով՝ տալ զսա նոցա և այլոց ընթեռնուլ հայերէն. ոչ ինչ երկմտեալ՝ թէ գուցէ հայն կորուսանիցէ զշնորհսն և զվսեմութիւնն։ Թերևս և օգուտ ևս նկատեալ նոցա 'ի սմին քաղաքացն այնոցիկ՝ առ որս գերեզմանական բարեպարիշտ գթասիրութիւն ապաստ անկեալ կայ 'ի խառնիխուռն անծանօթ և անյայտ թաղման սիրելեաց և յարգաւորաց։

Եղէն զհետ սորա և նախանձաւորք ոմանք 'ի նմանօրինակ տաղս, այլ ոչ ոք տակաւին եհաս սմա։ Են քերթողս և սուղ ինչ տեղեկութիւնք 'ի վերայ սորա՝ հմտականք և բաւականք առ իւրսն, այլ ոչ առ մեզ. յորոց ընտրեալ մեր զկարևորսն, զթերին լցուցաք՝ 'ի մերոցն բաւականութիւն։

ՀՈՒԳՈՆԻ ՓՈՍԿՈՒԼԵԱՅ

ՅԱՂԱԳՍ

ԳԵՐԵԶՄԱՆԱՅ

ՏԱՂ

ԱՌ ՀԻՊՊՈԼԻՏՈՍ ՊԻՆԴԵՄՈՆՏ

Ընդ նոճեաց հովանեաւ եւ 'ի տապան սիրտիւեալ յարտօսր
Եթէ քուն մահուն իցէ ինչ երբեք խուն մի հեշտագոյն։
Յորժամ ոչ եւս արեգակն ինձ ընդ երկիր բըղխեցուսցէ
Զգալարուոյ եւ զկենդանեաց ջըբնաղ տոհմի զարմ՝ եւ սերունդ,
Եւ չպարիցեն զառաջեօքս հանդերձեալ ժամք գեղեցկայոյսք, 5
Եւ ոչ, քաղցրը Սիրելի, այլ եւս ըզտաղն 'ի քէն ըլայց
Եւ զնոցին յօրինիչ ըզտրբամագին երգոց նրւագս,
Եւ ոչ 'ի սրբոյս խմուտ Ոգին բարբառիցի
Կոյս Մուսայից եւ Սիրոյ, Նրշդեհ կենացս ոգի միայն,
Զի՞նչ աւուրց կորուսելոց լիցի արձան մի մրխիթար՝ 10
Զիսն յանթիւ մեկնել ոսկերց, զոր մահ ցընդէ 'ընդ ծուլ ընդ ցամաք։
Ա՛ղդաբեւ, Պինդեմոնտ, Յոյսն իսկ յետին աստուածուհի
Խուսէ 'ի շերմաց, եւ զամենայն ինչ յիւր գիշեր
Պատէ մոռացութիւն. եւ զօրութիւն ինն ազգեցող
Շարժմանէ 'ի շարժումին տարտնապէ զամենեսին, 15
Եւ ըզմարդ եւ զիւր դամբանս եւ ըզյետին գիմաց նրշմարս
Եւ զնրշխարս երկրի ուերկնից այլակերպէ ժամանակ։

Իսկ հիմ յանձնէն տարաժամ յաչաղեցէ մահկանացուն
Ըզզատիրան որ 'ի դժոխոց կասէ զնա սեամն եւ յետ մահու։
Մինթէ չեցէ կենդանի եւ 'ի տորին սանդարամետս 20
Ի լրեալ 'ի նմանէ գեղայօրէն նուագաց աւուրն,
Յիւրոցն 'ի սիրտ թէ ծնանել զօրէ զնոսին քաղցրը խնամովք։
Երկնաւոր է սիրային այս խորհրդոց մըտերմութիւն,
Պարգեւ է երկնաւոր յազգի մարդկան, եւ նովաւ կեամք
Յաճախագոյն ընդ գնացեալ սիրեցելում, գնացեալն ընդ մեզ, 25
Թէ երկիրն, որ զնա մանուկ ընկալեալ նախ սնուցանէր,
Վերջին ապաստան 'ի մայրենին մատուցեալ ծոց՝
Սուրբ ընդունարան առնիցէ 'ի թօնրնկէց թըշնամանաց
Ու'ի խառնի ոսկին ոսկց, եւ պահեսցէ վէմ մի զանուն,
Եւ զերբեսցէ տունկ ծաղկահոտ սիրուն՝ զաճիւնն հեշտ հո

Ոչ նրմա՝ յիւր պարրսպին՝ եդ ինչ քաղաքքն հովանի,
Պակշտեալքն հրապուրող անարգական երդահանից,
Ոչ արձան, ոչ մի բան. եւ ո՞ գիտէ իսկ թէ թերեւս 60
Շաղախէ յարիւն զոսկերսն իւր աւազակքն կառափնատ,
Որ 'ի խեղդ կախաղանին ըմբեղանացն եթող ոճիրս։
Լրսես 'ի քարակոյտս անդ դերբկաց եւ 'ի կոճեղս
Չի սկուռնդն ընդ վայր անդ հարեալ փորէ թաթիւք իւրովք զերկիր
Թափառական ընդ խուռչս եւ ոռնաձայն սովալքլուկ, 65
Եւ զյոպոպ 'ի կառափնէն՝ ուր 'ի լուանոյ խոյս տայր, եղեալ
Սաւառնեալ ըզցան եւ ցեր խաչիւք դաշտին մահաբերի,
Եւ տրխուր հեկեկանօք պիղծ ամբաստան ըմբրշուլ՛ից՝
Որոլք կան բարերարեն առ մուտացեալ շիրիմս աստեղք։
Զուր, Դիցանոյշ, խընդրես ցօղ 'ի մուրթ ցայգդդ քուռ քերթողին. 70
Ո՛հ, 'ի վերայ մեռելոց՝ ծաղկան ինչ ոչ յառնէ փրթիթ,
Թէ մարդկան չիցէ գովիւք եւ արտասուօք սիրոյ պատուեալ։

Ցայնմ օրէ՝ յոր հարսանիք եւ գատաստանք եւ սեղանք սուրբ
Մարդկեղէն երէոց եռուն լինել գորովագութ
Առ անձինս եւ առ այլս, կենդանիք զոլորմ մնացորդս 75
Որ բնութիւն մշտանորոգ յայլ ինն ազգումքն հրաւիրէ,
Ցատկանիչ ժանտ օդոյն ու՛ի գազանացն կորզէին։
Դամբարանք երաշխաւորք էին վեպաց, որդւոց՝ բագինք,
Եւ անդուստ առարնին Ուրուականացն հընչէր պատգամք,
Եւ երդումն 'ի վերայ փոշւոյ հաւուցն՝ էր ահաւոր. 80
Կրօնք զոր պէսպէս օրինօք առաքինի հարցն հանդէպք՝
Ընդ նոսին եւ գորով՝ ընթացուցին ընդ ամս յամայր։
Ոչ միշտ վէմ դամբանական էր մեհենից սալայատակ,
Եւ ոչ խունկ 'ի նեղս դիոց պատեալ պրդծեաց զաղօթաւորս,
Եւ ոչ քաղաքք տրխրազգած եղեն 'ի կմախսս պատկերեալս։ 85
Զարհուրեալք ընդոստ 'ի քնոյ կարկառեն մարք մերկ ըզբաղուկս
Ի վերայ սիրեցելոյ գրլխոյ իւրեանց ըստընդէին,
Չի մի յերկարաձիգ զարթուսցէ քուք մեռեալ հոգւոյ
Որ հայցիցէ 'ի ժառանգացն ըզսրբութեան վարձուոր աղօթս։
Այլ նոռք եւ եղեւինք ըզսիքս 'ի սուրբ զանգեալ շոգի՝ 90
Անթարշամ սրփռէին գաղարութիւն ըզդամբանօք՝
Ցիշատակ յաւէրժական, եւ մեծագին շիւք կօշարայք
Զարտասուսքն ժողովեալ ուխտանքեւքս անփոփէին։
Թափէին սիրելիք կայծակքն մի յարեգանէ
Տանել լոյս ծագել 'ի մայլ անդընդախոր գիշերայնոյն. 95
Չի մարդոյս աչք 'ի մահու խընդրեն զարեւ արեգական,
Եւ բնաւ լանջք զյեռին թառանչն առ փախրստեայ նըշոյլն հանեն։
Աղբերք 'ի գնացս վրտակաց սրբութեան ջուրց՝ բողբոջէին

Անթառամ ծաղկունս 'ի հող մահուն եւ հոյլ հոյլ մանիշակ.
Եւ որ նրստէր կաթն հեղուլ նրւէր՝ եւ զվիշտրս իւր պատմել 100
Սիրելեաց հրաժարելոց, բուրումն առնոյր անուշութեան
Շուրջ զնրրեւ՝ իբր յԵնլիսեան երանաւէտ մարգաց սրղոխս:
Մոլութիւն գորովասէր, որ զդրախտ շիրմացն արուարձանեայց
Կուսիցն բրիտանեանց ըղձակերտիկ կացուցանէ,
Ուր մնր կորուսելոյ լինի նոցին սէր առաջնորդ, 105
Ուր զդարձին Հրեշտակս 'ի գուեթ աղերսեցին Առաքինուոյն՝
Որ զնաւին մատնելոյ 'ի պարտութիւն ըզմեծ շռնչին
Հար ընկէց, եւ փորեաց առ 'ի նմանէն իւրեան դագաղս:
Իսկ ուր նընջէ անուանի արիական գործոց աւիւն,
Եւ կենաց քաղաքացոյ՝ ինչք եւ դողումն են սպասաւորք, 110
Անդ յառնեն մահարձանք եւ կրճեայարկք դամբարանաց,
Պերճանք սընավասակ եւ դրժոխոց տնտուտ դրօշեալք:
Աւանիկ գիտուն եւ ճոխ եւ յոգնախուսիկն ազատագունդ,
Պարծանք ազնիւ Խաչական արքայութեանն եւ միտք ջրքնալ,
Կայ թաղեալ կենդանւոյն 'ի փաղաքշեալ անդ արքունիս, 115
Եւ դրրուատիս մի եւեթ ունի զնրշանս ազգատոհմին:
Մեղ մահ՝ հանգրստոց յօրինեսցէ խաղաղաւէտ՝
Ուր բախան 'ի վրիժուցրն միանգամ դադարեսցէ,
Եւ կալցի սէր մրտերիմ՝ ոչ թէ դանձից ժառանգութիւն,
Այլ մրրմունջրս ջերմագութ, եւ պատճենիկ ազատ տաղից: 120

Շիրիմք քաջազանց՝ զարի ոգին, ով Պինդեմոնտ,
Աւ մեծամեծրս վառէն, եւ գեղեցիկ եւ սրրքանուէր
Ընծայեն պանդրիտին զասպրնջականն իւրեանց զերկիր:
Իմ զդամբան տեսեալ երբեմն՝ յորում դրնի մարմին Մեծին
Որ կալեալ 'ի ջափու զթագաւորացրն գաւազան, 125
Եւ զնորուն տերեւընկէց փեռեալ սարդիս, 'ի վեր հանէ
Որպիսի արտասուս եւ որպիսի ծորք արիւն.
Եւ զտապանն այնրիսիկ՝ որ նորակերտ ինն Ոլիմպոս
Կառուցեալ կանգնեցոյց 'ի Հռովմ դասուցն երկնաւորաց,
Եւ զոր էաեան ընդ արփին վրանաւ յոլով աշխարհս 'ի ճախր 130
Եւ անշարժ զարեգակն առ 'ի նոսա ճառագայթեալ,
Որով նախ ըզկամարացն երկնից հորդեաց ըզճանապարհս
Անգլեացւոյն՝ որ ահագինս անդրը պարզեաց սաւառնաթեւս.
Երանի՛ քեզ, գոչեցի, առ կենաշունչ անոյշ օդոցդ,
Եւ լուալեաց զոր 'ի մնարիցրն ծաւալէ քեզ Ապենին: 135
Լուսինն օդովք քով բերկրալոր զգեցուցանէ յլրստակ լուսով
Զդարեւանդրս քո եւ զբլուրս զուարճացեալս 'ի կութս այգեաց,
Եւ հովիտք ձիթաստանեօք եւ բնակաւէտ շինիւք խրտնեալ՝
Խունկ յերկինս վերառաքեն բիւրս 'ի բիւրուց ծաղկանց բուրմունս:

Եւ դու նախ, Փլորենտիա, նրաբադայն ունկընդրեր 140
Որ զզայրուկըս փախրստեայ Գիբելլինին զուարթացուցին.
Եւ դու զսիրելի ծընօղսըն իւր եւ ըզբարբառ
Ընդունեցեր մեղրաբուխ Կալլիմվսեան շրթանն այնմիկ,
Որ ըզՍերբն մերկանդամ 'ի Յունաստան, մերկ եւ 'ի Հռոմ,
Լուսանիւթ քողով պըճնեալ՝ տայր յերկնային Ասաղկան գիրկս։ 145
Ալլ յաւէտ եւս երանի, զի ամփոփեալ 'ի մի տաճար
Պահպանես զԽոտալական փառս, եւ թերեւս ըզմի միայն,
Յորմէհետէ անարգել Ալպիք, եւ բուռըն զբրութիւն
Դարձադարձ մարդկեղէն բախտից՝ 'ի զինագ եւ 'ի ստացուածս
Եւ 'ի բաղինագ ասպատակ դնէին եւ հարց քոց 'ի գաւառ, 150
Եւ գոգցես թէ յամենայն, քաւ 'ի նոցին յիշատակէ։
Զի ուր յոյս շողայ փառաց յԽոտալիա եւ յարի միտս,
Անտի մեզ հանցուք հրմայս։ Եկն իակ ըստեպ Վիկտորիոս
Ի կուռնս յայս ոգի ծրծել. ընդ հայրենին սրբամտեալ գիս,
Թափառեր անմըռունչ յԱռնոսական ամայութիւնս՝ 155
Պըշուցեալ կաթոգին ընդ դաշտորայն եւ ընդ երկինս.
Եւ մինչ ոչ եւ մի տեսիլ կենսածաղիկ բուժէր զլեռնիծն,
Անողոքն ասա հանդչէր, մահուն դալուին 'ի դէմն, եւ յոյս։
Ընդ վեհիցս յաւէժ բնակէ, մընչէն ոսկերքն հայրենեաց սէր.
Օ՜ն եւ օն, 'ի կրօնասէր յայնմ հանգրստեան Ատուած խօսի, 160
Եւ ախոյեան պարսկայնոց սընուցաներ 'ի Մարաթոն —
Ուր Աթէնք դամբարանս իւրոց քաջացըն նրւիրեաց —
Զառաքինի զորութիւն եւ զբարկութիւնն հելլենական։
Նաւալիւղն առադասեալ ընդ այն անդունդս առ Եւբիաւ՝
Տեսաներ 'ի լայնատարը աղջամղջին՝ փայլատակունս 165
Թօթափեալ սաղաւարտից եւ սուսերաց ոգորելոց,
Եւ խարոյկըս հրաշունչ գոլորշախառն ոլորտացեալ։
Տեսաներ եւ երեւոյթըս ռազմաւոր նահատակաց,
Զի վառեալք յերկաթակուռ զէն՝ խաղային 'ի պատերազմ,
Եւ 'ի մութ սարսափելոյ գիշերային խոր լռութեան 170
Ծաւալեր երիցներ ընդ դաշտս ողջոյն գընդից գրոզորդ,
Փողոց ձայն եւ հալածել երիվարաց արշաւելոց
Եւ դոյթ նոցին ոանատրոփ զգրլխանոցօք հոգեհանաց,
Եւ ողբումն եւ նրւագք, ւօրհասաբեր Դրստերցըն երգ։

Երանի քեզ, Հիպոլիտա, որ 'ի տիոգդ ամբս գալար 175
Ընդ հողմոցն ընթանայիր լիսահման իշխանութիւն.
Եւ թէ վարեաց ըստ Էգեան կրղզիս ըզթեւաբդ նաւուղով,
Հին զրուցայ ըլաար անշուշտ համբաւ յեղերս Հելլէսպոնտի,
Եւ զգոչումն ալեաց ծովուն՝ որ տանէին յափունս Թրեան
Առ ոսկրոտին Իասայ զԱքիլլեսին զենուց կազմած։ 180

Արդար առ քաջազունս է մահ՝ փառաց մատակարար.
Ոչ հանձար խորագէտ, ոչ սէր եւ շնորհ թագաւորաց
Պահէին Թագկեցւոյն ըզկողոպուան անհընարին.
Զի ալիք յորդորեալք յանդընդային աստուածութեանց՝
Շրջեալ զայն շորթեցին 'ի թափառոտ լաստափայտէն: 185

Եւ զկա, զոր ժամանակք եւ պատուասէր շքոյ տըրվիք
Վարեն գնալ փախըստական յօտարասեռ աղին գրրոհ,
Զիս Մուսայք խրախուսիչք մահկանացու խմաստութեան՝
Յերեւան հրաւիրեացեն կոչել հանել ըզդիւցազունս:
Ընտեալ կան պահակերք գերեզմանացըն շահապետք, 190
Եւ յորժամ ժամանակ ցըրտասառոյց թեւոք իւրովք
Հարեալ 'ի բաց թօթափէ եւ զաւերակս անդամ անդուստ,
Զանապատս ուրախ առնեն 'ի ձայն երգոց իւրեանց Պիմպլայք,
Եւ յաղթէ լըռութեան հազար դարուց՝ նուագերգութիւնն:
Եւ այժմիկ 'ի Տրովադա՝ յակօսաբեկն եղեալ 'ի վար՝ 195
Ճաճանչէ առ պանդուխտն յաւէժալոյս վայր մըշտընջեան
Ի պատճառս Յաւէրժհարսին՝ Արամազդայ հարսնացելոյն,
Որ զաւակ ընծայեցոյց ըզԴարդանոս Արամազդայ,
Յորմէ եղեն եւ 'ի լոյս եկին Տրոյա ԵԱսսարակոս,
Եւ յիսուն սրբասպանքն, եւ պետութիւն Յուլեան տոհմին: 200
Զի յորժամ Էլեկտրա լըսաւ ըզձայն օրհասին դից՝
Որ զնա կոչէր 'ի կենաձիր շընչոյ լուսոյն Յելիսեան պարս,
Յետին զայս ուղերձեալ առ Արամազդ աղերս՝ ասէր.
Թէ քեզ սիրուն եղեն հեղքս եւ դէմք եւ քաղցրը տըքնութիւնք,
Եւ արիտուր ինչ պանծագոյն ինեբեն ինձ կամք ճակատագրաց, 205
Ի մեռեալ քո սիրելիդ դէթ դու յերկնից ակնարկեացես,
Զի հըուչակ համբաւոյ մնասցէ անուան քոյդ Էլեկտրեայ:
Մեռանէր նա յայս աղօթս, եւ Ոլիմպոս հեծեծէր.
Եւ գրլուին անմահական զանմահութեան ցօղ 'ի վարսին
Ակնարկելով արկանէր զՅաւէրժական հարսին անձամբ, 210
Եւ արար սըրբանուէր զմարմնին զայն եւ ըզչիրիմ:
Աղգ հանգեաւ Երիքթոն, նընջէ Իլեանն ճաճուն արդար,
Աղգ կանայք Իլիուհիք արձակեին ըզդէս յաղերս,
Ո՛հ, 'ի զուր, մերժել յարանցն ըզմօտաղուտ օրհաս մահուն.
Անդանօր Կասսանդրա, մինչդեռ աստուած լիւրում սըրտին 215
Տայր նրմա բարբառել զմահաշըշուկ օր Տրոյեոյ,
Եկն եհաս եւ երգեաց սիրոյ մըրմունջս առ Ուլուականն,
Եւ անցեալ պարադլուխ եղբօրորդւոյն՝ ուսուցանէր
Պատանեկացն ողբ սիրոյ, եւ զայս ասէր յոգւոց ելեալ.
Ո՛հ, ձեզ դարձ թէ յԱրգոսէ, ուր զերիվարսն արածիցէք 220
ԸզՏիթեան եւ զԼայերտեան որդւոյն, շնորհեն երբեք Երկինք,

Վայրապար եւ 'ի նանիր ըզհայրենիդ խնդրիցէք տուն.
Ուրմունքքն գործ Փիբոսի 'նդ աւերակքքն ծրխեացին,
Այլ թերափքքն տրովականք վանքս կալցին յայս գերեզմանս.
Զի պահել անուն պերճ 'ի տառապանս՝ է դից պարգեւ: 225
Եւ դուք նոճք լարմաւենիք, զոր Պրիամուն ընկէն նրանք,
Եւ յայրուութեան ոռոգեալ փուութով յարտասր, ահ, աճիցէք,
Լերուք հարցքս հովանի. եւ որ գրթովք պահէ զտապար
Ի նուիրական սաղարթուցդ՝ հասցէ նմա մի տոհմային սուգ,
Եւ 'ի բագին սրբբուութեան ամբիծ ձեռօք լինիցի հուպ: 230
Լերուք հարցքս հովանի. տեսանիցէք յաւուր միում
Ըզկոյր ոք մուրացիկ թափառ 'ի հին ձեր հովանիս,
Առ խարխափ երերուն 'ի դամբարանսքն առնել մուտ,
Գիրկս արկանել զտապանօքն եւ ըզնոսին հարցափորձել:
Հեծեացեն զանխուլ անձաւք, եւ պատմեսցէ շիրիմն ողջոյն 235
ԶԻլիոն հարթեալ երկիցքս եւ երկիցքս յարուցեալ
Փառօք պայծառասպէս ըզլրռանիսա Ճանապարհօք՝
Ճակատագրեալ Պելեանց շրքեղ եւս յաղթանակ շնորհել վերջին:
Ողբեալ երգովքն 'ի հաշտ սուրբ երգոցն զտրտմեալ հոգիսն՝
Արասցէ զթգաւորսն արդիացիս յաւերժ անմահս 240
Ընդ տիեզերս, զոր հայրքն մեծ Ովկիանոս ընդգոգէ:
Անդ եւ քեզ, Հեկտոր, ողբոց լեցի պատիւ, ուր ելցէ սուրբ
Եւ արտասուաց արժանի՝ արիւն հեղեալ վասն հայրենեաց,
Եւ մարդկան ցորքան 'ի վիշտսքն ծագեսցէ ակն արեւուն:

ՄԵԿՆՈՒԹԻՒՆՔ

Տող 5. Ժամք, թէ խմացին չորք եղանակք տարւոյն, և թէ քան և չորք ժամք աւուրն, պարել ասին յօրինաւոր կարգս ընթացից իւրեանց՝ յորս պատին բոլորին։

6. Ա՛ռ նոյն ինքն Պինդեմոնտ բարեկամ իւր ասէ զայլ և այլ տաղից նորա, մանաւանդ զԹղթոցն և զդաշտային քերթածացն։

9. Զի թող զկենցաղոյս պանդխտութիւն՝ գրեթէ միշտ նշդեհութեամբ կոչ[illegible] ինքն Փոսկոլոյ։

19. Պատրանս կոչէ՝ ոչ հաւաստեաւ, այլ թէ և այնպէս ինչ որ համարիցի։

20—25.—33, 34. Տողքդ և այլք զկնի ասա անդ՝ վկայեն անմահութեան հոգւոյ և հատուցմանց, զոր չտեսեալ ոմանց՝ բամբասեցին զտաղդ։

22. Կեանս իմն համարի գյիշատակ անցելոյ կենացն՝ զոր 'ի միտս ածելեացն զարթուցանէ վախճանեալն։

33. Ախերոն զդժոխս ասեն քերթողք, և ախերոնեան՝ զդժոխային։

39. Օրէնք տէրութեան 'ի սկիզբն դարուս արդելեալ էին քաղաքաց քաղաքաց յԻտալիա՝ չունել առանձինն գերեզմանատեղիս, չկանգնել մահարձանս և սեփական շիրիմս. ընդ որ դժկամակեալ ազատասէր քերթողին, և սրտմտեալ ընդ զրկանս հայրենեացն՝ երգէ զտաղդ յամի 1807։

41. Պաշտօնեայ Թալիայի Մուսային անուանէ զՅոսէփ Պարինի՝ զանուանի բանաստեղծն Լոնդրաբատացի վասն պէսպէս քնարական երգոցն, և մանաւանդ վասն զուարճախօսիկ չքնաղ քերթուածին Օր անուանելոյ. զոր 'ի չորս մասունս արարեալ՝ յայդ, 'ի մէջօր, յերեկ և 'ի ցայգ, կատակերգելով հենգնէ ճարտարապէս զբաարելի կամ զծաղրական բարս և վարս կենաց թեթեւամիտ և ախտաւոր մեծատանց. խրատ գեղեցիկ օրիորդաց և պատանեաց 'ի հակառակէն թելադրեալ։

43. Սարդենին մնուցեալ 'ի Պարինեայ՝ է անթառամ քերթուած նորին, զոր նուէր իմն համարէ Ալբոլնի դիցն քերթուեան իբրև զդաբնին. իսկ պատկերն են պատիւ և պաշտօն Մուսային։

45. Սարդանապալն Լանգուսարտացի, իմա Լանգոբարտացի, է ազնուականն ճոխ, հեշտասէր և փափկակեաց։

47. Ադդուական է այժմու Ադոտա գետոյն կողմանցն Լանգոբարտիոյ, զոր հինքն Աբդուա կամ Ադդուա կոչէին։ Իսկ Տիկինոս է դեռ մերնակողմանցն Իտալիոյ։

51. Իմանայ զանտառակն Թմբի ծառոյ՝ որ յարևելեան արուարձանին Մեդիոլանու, ուր յաճախել համարի զՊարինի։

52. Պայրենի յարկ իւր էր 'ի Զակլունթոս կղզի գեղեցիկ՝ ուր ծնեալն էր. բայց հինքն դտանէր յԻտալիա, և ևս առաւել 'ի Փլորենտիա. և ապա առ ազատասէր քաղաքականութեանն վտարեալ՝ պանդխտեցաւ 'ի Հելուետս, ապա 'ի Ռուսս, և հուսկ ուրեմն յԱնգլիա՝ 'ի Լոնդինոն։

53. Առ նա, առ Պարինի. ժամուէիր, բարեկամ և նպաստամատոյց էիր քերթուղեանն։

56. Յարուարձանեայ հասարակախառն գերեզմանատեղիս Մեդիոլանու։

58. Ոչ քաղաքն, բայց ապա մեծ ոմն կառոյց նմա շերիմ գեղեցիկ կճեայ 'ի դաստակերտի իւրում։

67. Սովոր են, մանաւանդ իտալեացիք, խաչս փայտեղէնս սեաւս կանգնել 'ի մնարից գերեզմանացն։

75. Յօրէ յորմէ օրէնք և քաղաքականութիւն ուսուցին անասնաբարոյ մարդկանն զգօնանալ և բարեպաշտել։

78. Հոմերոս 'ի ԺԴ Ոդիսականին, 369, ասէ զՈդիսևայ 'ի բերանոյ խոզարածին իւրոյ.

Գերեզման յայնժամ նրմա զորձէին ընաւ աբայեցիք,
Եւ որդւոյն իւրում ըզկնի իւր փառս մեծ առնոյր յապայս։

Եւ այս սովորութիւն կարգեալ եկեալ էր մինչև յապա ժամանակս հռովմայեցւոց, որպէս երևի 'ի բազում արձանագրոց, զի զդամբանօքն կանգնէին և սեղանս կամ բագինս դից՝ տխրատեսակ ժապաւինօք երիզապատս, և շուրջ զնոքօք նոճիս։

79. Կարծեցեալ թէ ոգիք առաքինեացն 'ի տունն շրջիցին 'ի պաշտպանութիւն ընտանեացն, կոչէին զնոսա ընտանի դիս կամ ուրուականս։

83. Որպէս յայտ է, յամենայն գրեթէ աշխարհս եւրոպացւոց մինչև մերձ 'ի յետին ժամանակս՝ ընդ սալայատակաւ տաճարաց թաղէին դիակունք։ Որ զկնիդ գան տողք՝ մինչև 89 բանաստեղծական երևութիւնք են հանճարոյ։

89. Քանզի ընդ վաստակոցն առնուն տուրս ինչ պաշտօնեայք աղօթիցն, զայն ասէ վարձկան աղօթս, կամ թերևս զժառանգացն՝ յետ այնչափ ինչ ժառանգելոյ։

92. Զարտասուս կոծողացն 'ի պատուական անօթս ժողովեալ՝ թաղէին ընդ վախճանեալսն, և կանթեղ մի վառեալ ընդ նոսին, թերևս նշանակ ոգւոցն անմահութեան։

96. Որպէս և Վիրգիլիոս երգէ զանձնասպան դշխոյէն Դիդովայ՝ 'ի 690—692 տողս չորրորդ աբանչելի գրոց Էնիականին.

Զանձն երիցս ամբարձեալ եւ յեց յարմուկն եկաց կանգուն,
Գլեցաւ երիցս յանկողնին, եւ զաչսքն այսր անդր յածեալ՝
Լոյս յերկնից խընդրեաց բարձանց, եւ գըտեալ զայն՝ յոգւոց եհան։

100. Օրէնք էին սգաւորաց և աղաչաւորաց երթալ նստել առ սեղանօքն և գերեզմանօք, և նուիրել ոգւոց նուէրս, կաթն, գինի անաղակ, արիւն և ծաղկունս, և մրմնջել զցաւս իւրեանց։

101. Ի տապանի ուրեք արձանագրեալ գտանի հելլներէն. «Ցիւրս անուշունս հոգին քո, որդեակ։»

104. Են յԱնգլիա աւանք մեծամեծք և փոքրիկ քաղաքինեաք, ուր գերեզմանատեղիք ևեթ են հասարակաց ճեմելիք ժողովրդեան. սիռեալ կան 'ի նոսա բազում զարդարանք և յոլով զուարճութիւն դաշտային։

106. Առաքինի ծովակալն անգլեացի Նելսոն կալաւ յԵգիպտոս 'ի գալլիացւոց զմեծամարմին նաւն Արիէլ անուն, եհատ զմեծ կայմն նորա և 'ի ստուար ընոյ նորին արար իւր դագաղ, և միշտ ընդ իւր տանէր։

110. Ինչք և գոյքն. ընչաւետութիւն դատարկանձանց, և ահ երկիւղին յերեսաց բռնաւորութեան, որով ընդարմացեալ կան։

124. Զդամրան Նիկոլայոսի Մաքքեաւելլեայ՝ հզօր քաղաքավարի։

128. Զտապան Միքէլանգելոսի, Ճարտարապետի հրաշակառոյց գմբեթի վատիկանեան տաճարին Հռովմայ։

130. Զդալիլէոսի մեծի ընախօսի և աստեղաբաշխի, որ առաջնորդ եղև անգլիացւոյն Նեւտոնի յեւ մեծամեծս։ Երեքեան դոքա 'ի Սուրբ Խաչ եկեղեցւոյն Փլորենտիոյ կանգնեալ կան։

134. Առ Իտալիա է երանութիւնս այս՝ առ հայրենի աշխարհ քերթողին։

135. Ապենին լերինք են 'ի միջավայրին Իտալիոյ մեծամեծք։

140. Կարծիք են բազում պատմագրաց, թէ անուանի քերթուածն Ցանթէի փլորենտացւոյ՝ քերթողահօրն Իտալացւոց, սկսեալ իցէ յառաջ քան զաքսոր նորա 'ի քաղաքէն, վասն որոյ և անդէն 'ի նմին Փլորենտիա առեալ սկիզբն։ Իսկ Գիբելլին կոչի Ցանթէ՝ վասն կուսակից և 'ի գլխաւորացն լինելոյ ազատասիրաց ժամանակին՝ Գիբելլին անուանելոց։

143. Կալլիովպէ՝ Մուսայ է. կալլիովպեան՝ մուսայական, բանաստեղծական։ Զպետարակայէ են բանքդ, որ 'ի Փլորենտացի ծնողաց էր 'ի տարագրութեան նոցա ծնեալ. և է քերթող յարդարուն լեզու քան զՑանթէ. և իբր թէ զգեցուցեալ և պարկեշտացուցեալ է 'ի տաղս իւր զՍերն անհամեստ։

145. Հինքն ևս զանազանեին երկուս Աստղկս. մի՝ երկրաւոր և զգայական, և միւս՝ երկնային և հոգևոր, որոց և պաշտամունք և քուրմք էին այլ և այլ։ Կիկերոն չորս Աստղկս ճանաչէ, յորոց մին նոյնպէս երկնաւոր, դուստր Երկնի և Տուընջեան. այլ զմիւս երիսն 'ի մի ամփոփեն այլք։

*

146. Ի Սուրբ Խաչ Եկեղեցւոջն Փլորենտիոյ, որպէս կանխեցաք ասացաք 'ի թիւն 130։

148. Ալլիք են ալլեան լերինք բարձրաբերձք, իրբև պատուար կանգնեալք ընդդէմ հիւսիսական հենից։

153. Հմայս, այսինքն բարեաց ըղձութիւնս կամ գուշակութիւնս, քաջալերութիւնս 'ի սէր հայրենեաց։ — Իսկ Վիկտորիոս է Ալֆիէրի, քերթող ողբերգակ հռչակաւոր. և սրտմոտեալ ասէ զնա ընդ հայրենի դիւն, զի անչափ հայրենասիրութեամբն էր այր անհանդարտ և միշտ տժգոհ և անհանգիստ ընդ բախտ հայրենի աշխարհին. և որպէս նկարագրեալդ է՝ այնպէս վկայէ քերթողս տեսեալ զնա 'ի վերջին ամն կենաց նորա։ Եւ սորա դամբան կայ 'ի Սուրբ Խաչ Փլորենտիոյ ընդ այլ մեծան, յորոց կճեայ տապանն զնայր 'ի կենդանութեանն՝ վառեալ զսիրտ իւր և զհանճար։ Ի վերայ շիրմին իւրոյ արձանագրեալ կայ, թէ Աստուրեան հանդեաւ Ալֆիէրի։

155. Առնոս՝ գետ է Տոսկեան աշխարհին Իտալիոյ, և Փլորենտիայ։

160. Աստուած իմանայ զՈգի հայրենեաց և զազգասիրութիւն, զաստուածային առաքինութիւնսն։

161. «Ի Մարաթոնեան դաշտին, ասէ Պաւսանիաս հելլէն պատմիչ, են զերեզմանք ամենայնոցն անկելոց 'ի մարտին. և զամենայն զիշերս լսելի լինին անդ խրխինջք ձիոց, և երևութանան ցնորք պատերազմողաց»։ — Եւրիա կղզին մեծ՝ կայ հանդէպ Ծովեղերն յոր եղ թափեցաւ Դարեհ աղքայ Պարսից յաչմ պատերազմի։

174. Դատերս Օրհասին իմա զՊարկայան ասացեալս. զորոց ասի թէ երգելով կանխաձայնէին զվիճակս մարդկան՝ զծնունդեան և զմահուն։

177. Իգեան կղզիք են Ծովուն Յունաց որ Արշիպելագոսն կոչի այժմ։

178. Առ տրովական ափամբք Հելլեսպոնտոսի էին դամբանք Աքիլլեայ և Պատրոկլի, և այլոց անկելոց դանայեցւոց։

179. Զրուցէ Պաւսանիաս, թէ «Վահանն Աքիլլեայ շաղախեալ արեամբն Հեկտորի՝ անիրաւ դատավճռաւ պարգևեցաւ Ոդիսեայ (Իթակեցւոյ). բայց Ծովն յափշտակեաց զայն 'ի նաւաբեկութեան նորա, և առեալ տարաւ 'ի Լիւդ՝ ոչ յԻթակէ, այլ 'ի գերեզմանն Իյասայ (սալամինացւոյ). և այնպէս յանդիմանեալ զանիրաւ դատաստանն դանայեցւոյ՝ հատոյց Սալամինայ զփառսն որ նմին անկ էր։ Լուեալ եմ թէ այս համբաւ զինուց Ծովանցիկ եղելոց մինչև 'ի դամբան Տելամոնեանն Իյասայ՝ զոբացեալ էր առ Իյոլացիսն, որ յապա ժամանակս բնակեցին Յիլիսն»։ — Ռետեան սարաւանդն՝ կարկառեալ 'ի Բոսպորն Թրակեան՝ անուանի է առ ամենայն հինսն 'ի պատճառս դամբանին Իյասայ։

193. Պիմպլայք, Մուսայք. 'ի Պիմպլա լեռնէն կամ 'ի Պիմպլէա աղբերէն՝ նուիրելոց Մուսայից։

195. Ի Տրովադա՝ որ այժմ մշակեալ դաշտոցայ է, արդի ճանապարհորդք դբան, կամ դտեալ կարծեցան, զմեացորդս գերեզմանին Իլիոսի՝ մերն 'ի նախահարց դարդանացւոց, որ է տրովադացւոց։

197. Յաւէրժահարսին Իշխկարայ՝ դստերն Աղլաասայ։ Ի մէջ բազմադէմ զրուցոյ ազգաբանութեան դարդանացուոց՝ գտանի և այդ, ընկալեալ և 'ի Վիրգիլեայ և յՈվիդիոսէ։

200. Ցիսուն առագաստքն են յիմնից ուստերացն և նուանցն Պրիամոսի արքային Տրովադայ, յիշատակեալք 'ի Հոմերոսէ. (Իլ. Զ. 244)։ Ի Դարդանեան Ասսարակոսէ՝ յորդւոյ Տրովսայ՝ սերեցաւ Էնիաս նախահայր հռովմայեցւոց, յորմէ Յուլիոս որդին, և 'ի սմանէ Յուլեան ազգ և ցեղ Յուլիոսի կեսարու։

212. Այս Երիքթոն էր ուստր Դարդանոսի՝ արքայ Տրոյեայ. իսկ Իլոս՝ ուստր Տրովսայ որդւոյ Երիքթոնի՝ նոյնպէս արքայ Տրոյիոյ, յիշատակեալ իբրև այր արդար, յորոյ անուն և քաղաքն կոչէր Իլիոն կամ Իլիոս։ — Առ նոցա շերմաբն կանայք տրովադայիք յԻլիական պատերազմին վասն արանցն պաղատանս մատուցանէին հերարձակք 'ի նշան ազդ. զի այս սովորութիւն էր ազգացն 'ի յուղարկաւորութիւնս և 'ի զոհս մեռելոցն։

215. Կասսանդրա, որ և Աղեքսանդրա, գեղեցկագոյնն 'ի դստերսն Պրիամու և Հեկաբեայ՝ իբրև զԱստղիկ, մարգարէուհի համարեալ, յԱպոլլոնէ առեալ պշնորհսն. որ ապա ցասուցեալ ընդ ըմբոստութիւն նորա, և չմարթացեալ հանել 'ի նմանէ զպարգևսն, արար զի ոչ որ հաւատասցէ մարգարէութեանց նորա։

220. Արածել զձիս՝ է գործ ծառայութեան և ստրկութեան գերեաց։

221. Զձիս Դիոմեդեսի որդւոյն Տիդեայ, և զՈդիսեայ ուստերն Լայերտեսի, գոռնահատակացն և ախոյենից ընդդէմ արուեստանց։

223. Զի Փիբոս կամ Գուշակն Ապոլլն ընդ Պոսիդոնի՝ հիմնարկեալ շինեցին զքաղաքն Տրոյա։

230. Հալիլ 'ի բաղին, կամ որ նոյն է 'ի սեղան աստուածոց, գործ բարեպաշտութեան յաղօթս, 'ի զոհս և յերդումն։

232. Կոյրդ այդ մուրիկ՝ է Հոմերոս. ընդ աշխարհ համբէն ընդ գիտնական՝ ծանօթ է աղքատութիւն և կուրութիւն մեծի քերթողահօրն ամենայն ազգաց. այլ որ զնա 'ի ծնէ կոյր ասացին, նոքա ինքեանք են կոյրք, որպէս կնքեաց ոմն։

236. Մի անգամ 'ի Հերակլեայ յատակեալ, և երկրորդ՝ 'ի Միասանեանցն Ամազոնաց։

238. Պելլեանց կամ Պելլեսեանց, Աքիլլեայ և որդւոյ նորա Պիւռոսի պահեալ էր 'ի ճակատագրէն վերջին աւեր և բնաջինջ բարձուն Իլիոնի։

240. Արգիացի թագաւորքն են իշխանք Հելլենաստանի, որ տասնամեայ ճըգամբք յաղթեցին տրովացւոց, և մինչև ցայսօր հռչակին ընդ աշխարհ 'ի Հոմերոսէ։

242. Ովկիանոս հայր համարեալ գետոց և ջրոց, ուստի և ամենայն ծնունդոց երկրի. զի առանց խոնաւութեան չիք սերունդ, և թալէս սկիզբն և տարր ամենայնի դնէր զջուր. և Պինդարոս երգէ. Վեհագոյն է ջուր։

ՀՀ Ազգային գրադարան
NL0343284